



- Մարզկենտրոնը՝**
ք. Հրազդան
- Տարածաշրջանները՝**
Հրազդան,
Կոտայք,
Նաիրի
- Քաղաքները՝**
Հրազդան,
Արովյան,
Չարենցավան,
Եղվարդ,
Բյուրեղավան,
Նոր Հաճն,
Օտակաձոր

Տարածքը	2 086 քառ.կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.0 %
Համայնքներ, 2016թ. տարեակզբի դրությամբ	67
Քաղաքներ	7
Գյուղեր	62
Բնակչության թվաքանակը 2016թ. տարեակզբի դրությամբ	253.9 հազ.մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	137.9 հազ.մարդ
գյուղական	116.0 հազ.մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	8.5 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	54.3 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	154 622.1 հա
այդ թվում՝ վարելահողեր	37 750.4 հա

ՀՀ Կոտայքի մարզը գտնվում է հանրապետության կենտրոնում: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ ՀՀ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին:

ՀՀ Կոտայքի մարզի տարածքով են հոսում Հրազդան և Ազատ գետերը: Հրազդան գետը (նախկին անվանումը՝ Ջանգու) Արաքս գետի ձախ վտակներից է (երկարությունը՝ 141 կմ): Գետի համակարգում կա 340 վտակ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն: Գետի խոշոր վտակներից են Մարմարիկը, Ծաղկաձորը, Արայի գետը, Գետառը:

Ազատ գետը նույնպես Արաքսի ձախ վտակներից է (երկարությունը՝ 55 կմ): Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայից (հիմնականում սնվում է ստորերկրյա ջրերով): Գետի ջրերն օգտագործվում են հիմնականում ոռոգման նպատակով:

Մարզը հարուստ է հանքային ջրերով, դրա վկայությունն են «Բջնի» և «Արգնի» հանքային ջրերը:

Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների փեշերը, Ծաղկունյաց լեռնաշղթան, Հատիս և Արայի լեռները: Հատիս լեռը (նախկին անվանումը՝ Շամիրամի) կոնաձև հրաբխային զանգված է (բարձրությունը՝ 2 528 մ): Լեռը ծածկված է մարգագետնատափաստանային բուսականությամբ:

Արայի լեռը (բարձրությունը՝ 2 577 մ)՝ հանգած հրաբխային զանգված է, գտնվում է Արագած լեռից արևելք՝ Քասախ և Հրազդան գետերի միջև:

Մարզի հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1 200 – 1 300 մ բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1 700 – 1 800 մ բարձրության վրա):

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան–Հրազդան–Սևան ավտոմայրուղին և Երևան–Հրազդան–Իջևան երկաթգիծը:

2015թ.-ին մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 10.3 %,
- գյուղատնտեսություն՝ 6.1 %,
- շինարարություն՝ 5.0 %,
- մանրածախ առևտուր՝ 3.5 %,
- ծառայություններ՝ 6.8 %:

ՀՀ Կոտայքի մարզը համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն արդյունաբերությունն է: Մարզը բացառիկ դեր ունի հատկապես էներգետիկայի բնագավառում: Այստեղ են գտնվում էլեկտրաէներգիայի արտադրության 2 խոշոր կազմակերպություն:

Մարզի արդյունաբերության մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ ճյուղերը.

ա) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, ըմպելիքի արտադրություն),

բ) ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ապակու և դրանից պատրաստվող իրերի արտադրություն, ցեմենտի արտադրություն),

գ)մետաղագործական արդյունաբերություն և մետաղե արտադրատեսակների արտադրություն (պողպատի և թուջի ձուլում),

դ)կահույքի արտադրություն, այլ կատեգորիաների մեջ չմտցված պատրաստի իրերի արտադրություն (ոսկերչական իրերի և կից ապրանքների (ադամանդի) արտադրություն):

Մարզի գյուղատնտեսությունը մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Արմվյան քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 44.4 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 18 կմ հեռավորության վրա: Հանրապետության ամենաարագ աճող քաղաքներից է, արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկը:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում գարեջրի արտադրությունը:

Բյուրեղավան քաղաքի (2016թ. տարեսկզբին՝ 9.3 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 24 կմ հեռավորության վրա) արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ապակե տարայի, ճենապակուց և հախճապակուց տնտեսական կենցաղային արտադրատեսակների արտադրություններ):

Շղվարդ քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 11.9 հազ. բնակիչ) գտնվում է Արայի լեռան հարավային ստորոտում, հեռավորությունը Երևանից 18 կմ է:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը (թորած ալկոհոլային խմիչքների (կոնյակի), կաթնամթերքի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրությունը):

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի մեջ հիմնական ուղղությունը հացահատիկի մշակությունն է:

Նոր Հաճն քաղաքի (2016թ. տարեսկզբին՝ 9.4 հազ. բնակիչ, հեռավորությունը Երևանից 30 կմ է) արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրությունը (ոսկերչական արտադրատեսակների (ադամանդի) արտադրությունը):

Հրազդան քաղաքի (2016թ. տարեսկզբին՝ 41.2 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 50 կմ է: Գտնվում է Հրազդան գետի վերին հոսանքի ձախ ափին: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Այստեղ է գտնվում Հրազդանի ՋԷԿ-ը, որը հզորագույնն է ՀՀ-ում: Արդյունաբերության մյուս ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (մասնավորապես՝ ցեմենտի արտադրություն):

Չարենցավան քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 20.5 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 36 կմ հեռավորության վրա, Հրազդան գետի ձախ ափին: 1953թ. ՀԷԿ-ի շինարարության ավարտից հետո քաղաքում կառուցվեցին մի շարք խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ և Չարենցավանը դարձավ հանրապետության կարևոր արդյունաբերական կենտրոն:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի մետաղագործական արդյունաբերությունը և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը (պողպատի և թուջի ձուլում):

Ծաղկաձոր քաղաքի (2016թ. տարեսկզբին՝ 1.2 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 55 կմ հեռավորության վրա) կլիման մեղմ է և առողջարար: Առողջարանային քաղաք է:

ՔԱՂԱՔՆԵՐ

Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ *
Հրազդան	41 170
Աբովյան	44 417
Չարենցավան	20 490
Եղվարդ	11 880
Բյուրեղավան	9 348
Նոր Հաճն	9 352
Ծաղկաձոր	1 214

ԳՑՈՒՂԵՐ

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ**
Հրազդանի տարածաշրջան		
1	Այափարս	2 359
2	Աղավնաձոր	1 296
3	Արզակյան	2 848
4	Արտավազ	602
5	Փյունիկ	421
6	Բջնի	2 872
7	Լեռնանիստ	2 935
8	Կարենիս	852
9	Հանքավան	101
10	Մարմարիկ	769
11	Մեղրաձոր	2 662
12	Գոռգոչ (Կորչյու)	-
13	Զրառատ	551
14	Սոլակ	2 494
15	Քաղսի	2 418
16	Ֆանտան	1 042
Կոտայքի տարածաշրջան		
1	Ակունք	2 208
2	Առինջ	6 214
3	Արամուս	3 746
4	Արզնի	2 532
5	Բայախովիտ	3 539
6	Գառնի	7 734
7	Գեղադիր	719
8	Գեղաշեն	4 257
9	Գեղարդ	375
10	Գետարգել	803
11	Գոդթ	2 044
12	Զառ	1 513
13	Զովաշեն	167

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ**
14	Զովք	1 027
15	Կաթնաղբյուր	730
16	Կամարիս	2 433
17	Կապուտան	1 255
18	Կոտայք	2 026
19	Հատիս	297
20	Հացավան	590
21	Զորաղբյուր	2 425
22	Մայակովսկի	2 142
23	Նոր գյուղ	1 566
24	Նուռնուս	652
25	Ողջաբերդ	1 011
26	Պտղնի	1 621
27	Զրաբեր	425
28	Զրվեժ	6 308
29	Սևաբերդ	259
30	Վերին Պտղնի	807
Նաիրիի տարածաշրջան		
1	Արագյուղ	1 160
2	Արգել	3 296
3	Բուժական	1 769
4	Գետամեջ	770
5	Զովունի	5 919
6	Զորավան	1 696
7	Թեղենիք	586
8	Մրգաշեն	2 209
9	Նոր Արտամետ	1 249
10	Նոր Գեղի	6 303
11	Նոր Երզնկա	1 894
12	Պոռշյան	5 234
13	Սարայանջ	385
14	Քանաքեռավան	3 772
15	Քասախ	6 095
16	Քարաշամբ	725

Ծանոթություն՝

* ՀՀ Կոտայքի մարզի քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:

** ՀՀ Կոտայքի մարզի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղերի կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 953 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2016թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +12.9%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2015թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	5 169	4 831
Ծնվածներ, մարդ	142	66	76
Մահացածներ, մարդ	92	44	48
Ամուսնություններ	63	X	X
Ամուսնալուծություններ	12	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	251	121	130
հանրակրթական	1 366	651	715
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	163	108	55
նախնական մասնագիտական (արհեստագործական)	26	7	19
միջին մասնագիտական	50	21	29
բարձրագույն մասնագիտական	9	5	4
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	34 990
Մարզիկներ, մարդ	162	14	148
Զբաղվածներ, մարդ	3 781	1 664	2 117
նրանցից՝ գիտական հիմնարկներում	0.0	0.0	0.0
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	0.0	0.0	0.0
ուսուցիչներ	121	105	16
բժիշկներ	21
միջին բուժանձնակազմ	43
Գործազուրկներ, մարդ	1 129	567	562
Մոզայական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակատուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 397	823	574
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	366	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	16 349
թատրոն	12
համերգ	-	-	-
թանգարան	550
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	58	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	29	X	X
միջին ծանրության	16	X	X
ծանր	12	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: